Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1529 - Լ որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման չափը և աղբյուրը (հազ. դրամ)	Ակնկալվող արդյունքը
Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ակտիվ քաղաքականության իրագործում					
1.	Ֆրանկոֆոնիայի մարզամշակութային խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե 39,910.40	Բարեկամական կապերի հաստատում տարբեր երկրների հետ, խոշոր միջազգային մրցումներին մասնակցության միջոցով մարզական փորձի ձեռքբերում, մարզական վարպետության բարձրացում: Ծրագրում ընդգրկված 5 մարզաձևերից 26 մարզիկների և 5 պատվիրակության ղեկավարների մասնակցության ապահովում: Մարզական արդյունքների բարելավում, մրցանակային տեղերի գրավում

2.	ԱՊՀ երկրների երկրորդ մարզական խաղերին ՀՀ մարզական պատվիրակության մասնակցության ապահովում		2-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե 45,807.50	2023 թվականին Մինսկում կայանալիք ԱՊՀ երկրների մարզական խաղերի Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում 14 մարզաձևերից, մրցակցական փորձի ձեռքբերում, բարեկամական կապերի հաստատում
3.	Երևանում կայանալիք ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնության անցկացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	1-ին եռամսյակ	ՀՀ պետական բյուջե 990,014.20	Հայաստանի Հանրապետությունում անցկացվող ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնությունը կնպաստի մարզաձևի զարգացմանը և մասսայականացմանը, մրցակցական փորձի ձեռքբերմանը, միջպետական բարեկամական կապերի հաստատմանը և ամրապնդմանը, սպորտի՝ որպես միջազգային ասպարեզում մեր երկրի ճանաչման հավելյալ միջոցի կարևորում, Հայաստանի Հանրապետության հեղինակության բարձրացում

4.	Համաշխարհային ունիվերսիադային Հայաստանի ուսանողական մարզական պատվիրակության մասնակցության ապահովում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Ուսանողական մարզական ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն	առաջին և երրորդ եռամսյակներ	ՀՀ պետական բյուջե 39,350.00	Հայաստանի Հանրապետության ուսանող լավագույն մարզիկներով և հավաքական թիմերի մարզիչներով համալրված Հայաստանի Հանրապետության համալսարանական մարզական պատվիրակությունների մասնակցության ապահովում 11 մարզաձևերից, համալսարանական սպորտի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՍՈՒ) կողմից կազմակերպվող մրցումներին
	Ֆիզիկական դաստիարակության և զանգվածային սպորտի զարգացում				
5.	Մասսայական սպորտին առնչվող ծառայություններ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե *50,000.00*	Տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատության և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու անընդհատության ապահովում, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում, շուրջ 4 մարզական զանգվածային միջոցառման անցկացում տարվա ընթացքում

6.	«Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի անցկացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	երկրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե 25,724.19	Հանրապետությունում հեծանվային սպորտի և առողջ ապրելակերպի մասսայականացում, «հեծանիվը որպես շրջակա միջավայրն աղտոտվածությունից զերծ պահելու միջոց» գաղափարի քարոզում, 18 տարեկան և բարձր տարիքի տղամարդկանց և կանանց՝ շուրջ 400 մասնակցի ապահովում
7.	«Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի անցկացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	առաջին եռամսյակ	ՀՀ պետական բյուջե *25,196.04*	Ժամանցի, ակտիվ հանգստի կազմակերպման և առողջ ապրելակերպի ձևավորման գործում սեղանի թենիս մարզաձևի դերի բարձրացում և մասսայականացում, 18 տարեկան և բարձր տարիքի տղամարդկանց և կանանց՝ շուրջ 200 մասնակցի ապահովում
8.	«Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարի անցկացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	երրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե *20,155.20*	Հայաստանի Հանրապետությունում լող մարզաձևի մասսայականացում բնակչության բոլոր տարիքային խմբերի համար, ֆիզիկական դաստիարակության ապահովման գործընթացների խթանում, շուրջ 100 մասնակցի ապահովում

9.	«Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղավազքի սիրողական մրցաշարի անցկացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	երրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե 41,689.98	Տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատության և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիության ապահովում, շուրջ 2000 մարդու մասնակցություն
10.	«Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի անցկացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	երկրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե 29,274.93	Դպրոցականների շրջանում վազքի և առողջ ապրելակերպի մասսայականացում, ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում, շուրջ 500 դպրոցականների մասնակցություն եզրափակիչ փուլում
11.	Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Ուսանողական մարզական ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն	տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե *5,000.00*	Ուսանողության շրջանում առողջ կենսակերպի արմատավորում և մարզական-մասսայական միջոցառումներին ուսանողության ներգրավում. ուսանողության ֆիզիկական կարողությունների կատարելագործում, առողջության ամրապնդում, ուսումնական հաստատությունների մարզական ակումբների գործունեության ակտիվացում

Մանկապատանեկան սպորտի զարգացում և մարզական հերթափոխի պատրաստում					
12.	Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե 8,103.40	Տարեկան շուրջ 176 մարզիչ-մանկավարժների վերապատրաստում
13.	Մարզական նշանակության կառույցների կառուցում և վերանորոգում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ քաղաքաշինության կոմիտե	տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե 1,771,388.5	Վերանորոգված և բարեկարգ մարզակառույցների առկայություն՝ ըստ համապատասխան հայտերում ընդգրկված ցանկի
14.	ՀՀ հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններին, ինչպես նաև մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե 100,000.00	Մարզումների համար անհրաժեշտ ժամանակակից մարզական գույքով ապահովված մարզակառույցներ
Բարձրագույն նվաճումների սպորտի զարգացում					
15.	ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե 1,367,960.9	Թվով 36 մարզական հասարակական կազմակերպությունների մարզիկների՝ ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության

					ապահովման համար մարզիկ-ների նախապատրաստում և առաջնությունների անցկացում
16.	ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	առաջին եռամսյակ	ՀՀ պետական բյուջե 81,840.00	Շուրջ 33 ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովման ծառայություն-ների մատուցում
17.	Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե 121,685.02	Ադապտիվ սպորտով զբաղվող մարզական հասարակական կազմակերպությունների կողմից թվով 37 միջոցառումների՝ ՀՀ առաջնությունների անցկացման, պարալիմպիկ, սուրդլիմպիկ խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, միջազգային մրցաշարերին մասնակցության ապահովում
18.	ՀՀ հավաքական թիմերի մարզիկների ֆունկցիոնալ վիճակի արդյունավետու-թյան բարձրացման նպատակով վիտամինիզացիայի և չարգելված սպորտային հավելյալ սննդով ապահովում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	առաջին եռամսյակ	ՀՀ պետական բյուջե 40,000.00	Մարզիկի պատրաստման գործընթացում 30 մարզական հասարակական կազմակերպու-թյունների մարզիկներին վիտա-միններով և չարգելված սպորտա-յին հավելումներով ապահովում և աջակցություն մարզիկների սպորտային գործունեության,

					մրցակցային արդյունավետու-թյան բարձրացմանը
19.	ՀՀ հավաքական թիմերի մարզիկների հոգեբանական արդյունավետության բարձրացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	առաջին եռամսյակ	ՀՀ պետական բյուջե 4,000.00	Շուրջ 15 ՀՀ հավաքական թիմերի մարզիկների հոգեբա-նական արդյունավետության բարձրացման ապահովում
20.	Աջակցություն հայկական կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացմանը	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե 8,133.40	Հայկական կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացման և տարածման ապահովում, շուրջ 5 միջոցառման անցկացում տարվա ընթացքում
21.	Նավամոդելային սպորտի զարգացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	առաջին եռամսյակ	ՀՀ պետական բյուջե 5,075.10	Նավամոդելային սպորտի աշխարհի և Եվրոպայի առաջ-նություններին մասնակցություն և արդյունքների բարելավում, 6 մասնակցի ապահովում
22.	Շախմատիստների պատրաստման ծառայություններ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե 159,049.80	«Հայաստանի շախմատի ակա-դեմիա» հիմնադրամի 935 սաների ամենօրյա անվճար ուսուցում, միջազգային գրոս-մայստերների և վարպետների պատրաստում, նրանց համար ուսումնամարզական հավաքների և մրցաշարերի կազմակերպում

23.	Հայաստանի Հանրապետության հակադոպինգային ծրագրերի մշակում և իրականացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե 88,426.4	ՀՀ հավաքական թիմերի անդամների հակադոպինգա-յին վերահսկողության ապա-հովում, մարզաձևերի՝ ՀՀ առաջնություններին մասնակից մարզիկների դոպինգ թեստա-վորումներ, սեմինարների անցկացում, մարզիկներին իրազեկում
24.	Եվրոպայի երիտասարդական օլիմպիական փառատոներին մասնակցության ապահովում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	առաջին և երկրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե 77,838.40	Եվրոպայի երիտասարդության ձմեռային օլիմպիական փառա-տոներին ՀՀ հավաքական թիմերի 44 մասնակցի մասնակցություն և մրցանա-կային տեղերի գրավում
25.	Եվրոպական օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	երկրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե 107,965.40	Եվրոպական 3-րդ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցու-թյուն, ՀՀ հավաքական թիմերի 60 մարզիկների մասնակցու-թյուն և մրցանակային տեղերի գրավում

26.	Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե 150,000.00	Օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքներ ցուցաբերած մարզիկներին, մարզիչներին և բժիշկներին տարեվերջյան դրամական խրախուսում
27.	ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրություն և աշխարհի չեմպիոններին, օլիմպիական խաղերի և շախմատի համաշխարհային օլիմպիադայի մրցանակակիրներին պատվովճարի հատկացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե 171,198.00	Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզումների արդյունավետության բարձրացում, Հայստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիչների աշխատավարձի վճարում, վերջիններիս սոցիալական պայմանների բարելավում և մարզական արդյունքների բարձրացում
28.	Օլիմպիական խաղերում աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին անվանական թոշակի հատկացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե 624,346.20	Օլիմպիական խաղերում, աշխարհի, Եվրոպայի առաջնություններում, միջազգային մրցումներում մրցանակային տեղերի նվաճում, անձնական արդյունքների բարելավում:

					Օլիմպիական խաղերին մասնակցության համար վարկանիշների ձեռքբերում, աշխարհի, Եվրոպայի և Հայաստանի Հանրապետու-թյան ռեկորդների բարելավում
29.	ՀՀ «Տարվա լավագույն մարզիկներ» մրցույթի կազմակերպում, անցկացում և հաղթող ճանաչված մարզիկների պարգևատրում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	չորրորդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե 51,500.00	Օլիմպիական խաղերում աշխարհի, Եվրոպայի առաջնու-թյուններում հաղթողներին և մրցանակակիրներին, նրանց մարզիչներին և բժիշկներին դրամական մրցանակների հանձնում
30.	Ամառային օլիմպիական խաղերին նախապատրաստվելու նպատակով ֆինանսական աջակցության տրամադրում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե 550,500.00	2024 թվականի ամառային օլիմպիական խաղերին նախապատրաստվելու նպատակով ֆինանսական աջակցության տրամադրում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ